Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

22278

Ա. ԱՐՏՅՈՒԽԻՆԱ

ՀՐԱՀԱՆԳ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒՀԻՆԵՐԻՆ

ՍԱԽԵԼԳԱՄԻ—ԹԻՖԼԻՍ
1928

396
Ա-95

2884 2002

2010

396
Ա-95

Ա. ԱՐՏՅՈՒԽԻՆԱ

ՀՐԱՀԱՆԳ

ՊԱՏՎԻՐԱԿՈՒՀԻՆԵՐԻՆ

1009/38786 (3971)

ՍՊԱՍԵԼԳԱՄԻ—ԹԻՖԼԻՍ
1928

29797-Ա.Հ.

13238-58

ՊԱՏՎԻՐԱԿԱՅԻՆ ԺՈՂՈՎՆԵՐԸ՝ ՀԱՍԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ Է

Ամեն մի բանվորուհի պարտավոր է իմանալ, թե վոր աշխատանքների համար են ընտրում պատվիրակուհիներին, ում է հարկավոր պատվիրակային ժողովը և ինչ ոգնություն պետք է սպասի իր պատվիրակուհուց։

Բանվորուհիները փորձից գիտեն, վոր պատվիրակային ժողովը հանդիսանում է գործնական գործիչներ պատրաստող դպրոց, վոր պատվիրակային ժողովում բանվորուհին ծանոթանում է վոչ միայն խորհրդների, պրոֆմիությունների, կոոպերատիվի և ուրիշ հասարակական կազմակերպություններ-

րի աշխատանքների և խնդիրների հետ, այլ վորն ամենագլխավորն է, սովորում է թնմբ աշխատել այդ կազմակերպություններում:

Բանվորուհիները գիտեն նույնպես, վոր պատվիրակային ժողովները ընտրվում են բանվորուհիների կողմից և ծառայում են «ողակող կապ»-կուսակցության և բանվորական մասսաների միջև, վոր պատվիրակային ժողովների միջոցով կուսակցությունը ավելի սերտ կերպով է կապվում բանվորական մասսաների հետ: Լավ աշխատող պատվիրակային ժողովը, ինչպես հասարակական միավոր, ազդեցություն է գործում խորհրդների, պրոֆմիությունների, կոոպերացիայի և ուրիշ կազմակերպությունների աշխատանքների վրա:

Վորպեսզի ուղիղ աշխատել, հարկավոր է, վոր ամեն մի ընտրված պատվիրակուհի մանրամասն ծանոթանա պատվիրակային

ժողովների խնդիրների հետ, հիշելով, վոր պատվիրակային ժողովներում նա պետք է սովորի հասարակական աշխատանք կատարել:

ՊԵՏՔ Է ՀԻՇԵԼ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ամեն մի պատվիրակուհու անհրաժեշտ է հիշել, վոր պատվիրակային ժողովում վոչ միայն հարկավոր է վերաքննել ծրագրային հարցեր, այլ անհրաժեշտորեն պետք է քննել և վորոշել գործնական հարցեր աշխատավորական մասսային հետաքրքրող՝ խորհրդի, պրոֆմիության, կոոպերացիայի և տնտեսական որգանների աշխատանքների մասին: Գործնական աշխատանքները պարտադիր են ամեն մի պատվիրակուհու համար: Այն ժամանակ միայն բանվորուհուն

ոգուտ կբերի պատվիրակային ժողովների վորոշումները այս կամ այն գործնական հարցի մասին, յերբ իրենք պատվիրակուհիները գործնականորեն կլ։մանան այն գործը, վորը իրենք են քննում։ Իսկ նրա համար, վորպեսզի ամեն մի կցված պատվիրակուհի կարողանա լավ աշխատել այն կազմակերպության մեջ, վորին նրան կցել են, կազմակերպվում է պատվիրակային ժողովներին կից սեկցիաներ կամ խմբակներ։

Նոր պատվիրակուհին, վորը դժվար է հասկանում արտադրական, կոոպերատիվային, կամ պրոֆմիութենական հարցերը, անպայման անհրաժեշտ է գրվել համապատասխան սեկցիայում կամ խմբակում։ Իսկ յեթե պատվիրակուհիների մեջ կգտնվեն անգրագետներ, այն դեպքում հարկավոր է, վոր ամենից առաջ իրենց անգրագիտությունը վերացնեն։ Յեվ այդ կլինի անգրագետ պատվիրակուհու հիմնական գործնական աշխատանքը։

ՀԵՏԵՎԻՐ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆԸ

Պատվիրակուհիները պետք է խիստ հետևեն, վոր պատվիրակային ժողովներում ընդունված վորոշումները և բանաձևերը պարտադիր կերպով անցկացվեն կյանքում։ Լավ է ընդունել յերկու-յերեք առաջարկություններից բաղկացած փոքրիկ բանաձևեր, բայց անպայմանորեն անցկացնել կյանքի մեջ։

Ամեն մի պատվիրակային ժողովում պետք է հաշիվ տալ այն մասին, թե ինչպես է իրագործվել նախընթաց ժողովների վորոշումները։

Պատվիրակուհիները պետք է հիշեն, վոր նրանք ընտրվածներ են և այդ պատճառով

պարտավոր են իրենց և պատվիրակային ժողովների աշխատանքների մասին ամբողջովին հաշվետվություն ներկայացնել բանվորուհիների առաջ՝ անհատորեն կամ խմբովին։

ՄԵԾ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ ԱՇԽԱՏԱՎՈՐՈՒՀՈՒ ԿԵՆՑԱՂԻՆ

Ամեն մի բանվորուհի, իսկ պատվիրակուհին առանձնապես, զգում են, թե որքան դժվար է բանվորուհու կենցաղը։ Պատվիրակային ժողովները իրենց աշխատանքներում չպետք է մոռանան գլխավորը՝ «բարելավել աշխատավորուհու կենցաղը»։ Ամեն մի պատվիրակային ժողով, իր աշխատանքների առաջին իսկ որից անպայման իրեն վրա պետք է վերցնի կենցաղի մասին գործնական թեկուզ մի հոդս։ Պետք է նպատակ դնել. կամ նոր մսուրներ կազմակերպել, կամ մտցնել գոյություն ունեցողներում յերեկոյան հերթեր, կազմակերպել լվացարաններ, ճաշարաններ, մանկապարտեզներ կամ մանկական սենյակներ ակումբներին կից։ Պատվիրակուհիները մեծ ծառայություն մատուցած կլինեն, յեթե նրանք իրենց պատվիրակային ժողովների միջոցով կազմակերպեն աշխատավորուհուն ազատագրող թեկուզ մեկ հիմնարկություն։

Այդ հարկավոր է անել այսպես. պատվիրակուհիները ժողովում վորոշում են, թե ինչ հիմնարկություն է իրենց համար ամենից անհրաժեշտ։ Այնուհետև բանվորական ընդհանուր ժողովների և հասարակական կազմակերպությունների միջոցով հաջողեցնում են այդ հիմնարկության կառուցումը իրենց և բանվորուհիների լայն մասսաների աջակցությամբ։

Պատվիրակուհին պարտավոր է ձգտել, վորպեսզի ավելի մեծ կարգապահություն, մաքրություն և խնայողություն տիրի գոյություն ունեցող ճաշարաններում, մանկապարտեզներում, մսուրներում։ Հարկավոր է նույնպես ստուգել, թե վորքան արժե մսուրներում գտնվող յերեխաների ծախսը։ Սովորաբար ամեն մի յերեխայի համար մեկ ամսում ծախսվում է 30—40 ռ.։ Բայց կան և այնպիսի մսուրներ, ինչպես Ռոստովի ծխախոտագործարանի աշխատավորուհիների մոտ, վորտեղ յուրաքանչյուր յերեխայի ծախսը նստում է 45—48 ռ.։ Պետք է ձգտել մսուրների ամեն մի յերեխայի ծախսը կրճատել, չվատացնելով աշխատանքների հատկությունը։

ՈԳՆԻՐ ԱՆՑԿԱՑՆԵԼ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԻ ՎԵՐԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրակուհիները այժմ իսկ պետք է սկսեն խորհուրդների վերընտրությունների նախապատրաստական աշխատանքները։

Նրանց խնդիրներն են՝ պատվիրակային ժողովներում գտնել խորհուրդների կին անդամների հաշվետվությունը, ստուգել թե ով են աշխատել և բոլորն են արդյոք լծված յեղել խորհրդային գործնական աշխատանքներին։

Անհրաժեշտ է ուշադիր կերպով պատրաստվել՝ բոլոր բանվորուհիներին առաջիկա խորհուրդների ընտրություններին մասնակից անելու։

Այդ լուրջ և մեծ խնդիրը կիրագործվի, յեթե բոլոր բանվորուհիները, առաջին հերթին՝ ակտիվը, պատվիրակային ժողովները՝

խորհուրդների անդամները, պրոֆմիութիւններում և կոոպերատիվներում ընտրող բանվորուհիները ցույց կտան ակտիվ մասնակցութիւն։

Բանվորուհիների պատվիրակային ժողովները պետք է ամբողջովին լծվեն այդ խնդրի լուծմանը։ Ամենից առաջ, պետք է հիշել անցյալ ընտրութիւնների թերութիւնները։ Խորհուրդների անցյալ վերընտրութիւնների հիմնական թերութիւնը յեղել է այն, որ ընտրութիւններին ներկայացել են ոչ բոլոր բանվորուհիները, առանձնապես մանր գործարաններում։ Քիչ բանբանվորուհիներ են ընտրված խորհուրդներում։ Պատվիրակուհիները չեն կատարել այն բոլորը, որը հարկավոր եր բանվորուհիներին առաջ քաշել խորհուրդներում։

Վորպեսզի խույս տալ անցյալ ընտրութիւնների սխալներից, ամեն մի պատվի-

րակային ժողով պարտավոր է անպայման քննել կուսակցութիւնի և խորհուրդների ցուցմունքները՝ աշխատավորուհիներին խորհուրդները քաշելու մասին, գծել խորհուրդների ընտրական կամպանիային մասնակցելու ծրագիր՝ ինչպես պատվիրակային ժողովի, նույնպես և ամեն մի պատվիրակուհու համար։

Անհրաժեշտ է, որ պատվիրակուհիներն և պատվիրակային ժողովներն ամբողջ ընտրական կամպանիայի ընթացքում զորահավաքի յենթարկվեն։ Ամբողջ կամպանիայի ընթացքում ամեն մի պատվիրակային ժողովի նիստում որակարգի առաջին հարցը պետք է դրվի հաղորդագրութիւնի այն մասին, թե ինչպես է ընթանում խորհուրդների վերընտրութիւնները, ինչ թերութիւններ կան, որտեղ և ինչպես պետք է ուղղել։

Ինչին պետք է ձգտի պատվիրակությունը։ Ամենից առաջ նրան, որ բոլոր բանվորությունները ներկայանան ընտրությունների, որպեսզի խոշոր գործարանների բանվորությունները ոգնեն բանվորների և գինվորականների կանանց՝ կազմակերպվելու ընտրությունների համար։

Ինչպես պետք է աշխատեն պատվիրակությունները։ Առաջին իսկ պատվիրակային ժողովում հարկավոր է խորհրդների ընտրության վերաբերյալ ընտրական հանձնաժողովում ընտրել գիտակից, գրագետ յեվ հեղինակավոր պատվիրակների։

Դրանից հետո պատվիրակությունները պետք է իրենց բանվոր պատվիրակությունն ծանոթացնեն ընտրական կամպանայի հետ, պատմեն անցյալ տարվա թերությունների մասին և ծանոթացնեն այն պատվիրակության հետ, որը ընտրված է ընտրական հանձնաժողովում։ Այդ պատվիրակության միջոցով (ընտրական հանձնաժողովի անդամ) կվերացվի ընտրությունների բոլոր դժվարությունները և թերությունները։ Պատվիրակությունները իրենց տասնյակում վաղորոք քննում են, թե իրենց բաժնից կամ հերթից ում անցկացնեն խորհրդի մեջ։ Առաջ են քաշում ամենից հարմար (ցանկալի յե գրագետ) բանվորությունն նրա համար, որպեսզի նրա թեկնածությունը անպայման քննվի պատվիրակային ժողովում։ Պատվիրակությունն չպետք է մոռանա իր տասնյակին պատմել այն մասին, որ խորհրդների անդամ-աշխատավորությունների և գեղջկությունների միացյալ հանդամանքը որոշել է՝ խորհրդներում աշխատել սովորելը դարձնել հիմնական խնդիր։ Այդ պատճառով ել խորհրդի թեկնածուն պետք է լինի բանվորությունից ամենալավը։ Այդ անհրաժեշտ է նաև այն

պատճառով, վոր համագումարը խորհուրդ է տվել ավելի շատ բանվորուհիներ առաջ քաշել խորհուրդների ղեկավար աշխատանքների համար՝ վորպես նախագահներ, բաժնի վարիչներ և այլն։

Պատվիրակուհիները պետք է հիշեն, վոր խորհրդային ղեկավարող աշխատանքների համար հարկավոր է լավ բանվորուհիներից ամենալավը։ Այդ պատճառով, դեպի առաջ քաշված թեկնածուին պետք է վերաբերվել վոչ միայն ուշադիր, այլ և մեծ պատասխանատվության զգացումով։ Մենք առաջ ենք քաշում բանվորուհուն, մենք էլ պատասխանատու յենք նրա համար։ Վորպեսզի բանվորներն և բանվորուհիները պաշտպանեն պատվիրակային ժողովի կողմից խորհրդի համար առաջարկված թեկնածությունը, հարկավոր է, վոր խորհրդի նախկին կին անդամների հաշվետվությունները լայն կերպով դրվեն և լավ պատրաստվեն։

Հարկավոր է խորհրդի անդամ կնոջն ոգնել, վոր նա կարողանա ծանոթացնել բանվորներին և բանվորուհիներին վերընտրությունների ժամանակ ընդունած հրահանգի կետերի իրագործման, տեղեկություն տա խորհրդի և իր (վորպես պատվիրակուհու) ամբողջ աշխատանքների մասին։ Խորհրդի անդամ կանանց այդ հաշվետվությունները անհրաժեշտ է սկզբում դնել պատվիրակային ժողովում։

Այն ժողովում, վորտեղ պետք է լավի խորհրդի անդամ կանանց զեկուցումը իրենց աշխատանքների մասին. բոլոր պատրիրակուհիների սեկցիաներում տարած աշխատանքները չպետք մոռացվեն, նրանց մասին պետք է պատմել տեղն ու տեղը։

Պատվիրակային ժողովները և ամեն մի պատվիրակ, առանձնապես ուշադիր վերաբերմունք պետք է ցույց տան ապագա խոր-

1009/38786 (132238-38 39 47)

ՀԱՅԿ. ՍՍՀ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ Ա. ՄԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

կացարաններում պետք է կազմակերպել յերեխաների ընդհանուր խնամք, մասնակից անելով այդ գործին ուսուցչությունը, պիոներներին և այլն։ Գլխավորն այն է, որ պատվիրակուհիներն այդ հարցը բաց չթողնեն, այլ անպատճառ քննեն պատվիրակային ժողովում։ Բացի այդ միջոցառումներից, պատվիրակուհիները կարող են ընտրությունների ժամանակ բանվորուհուն յերեխաների հոգսից ազատող և թեթևացնող միջոցներ կիրառել։

Պատվիրակուհիները պետք է նաև նախատեսեն, որպեսզի ընտրությունների որը չը լինեն բաղնիսներ և լվացարաններ, որ արգելք չհանդիսանային բանվորուհիներին մասնակցել ընտրություններին։

Պատվիրակուհիները պարտավոր են հոգալ, որ ծանուցագրերը իր ժամանակին հանձնվեն, նաև կազմակերպեն ստուգումթե,

ժամանակին է հանձնվում արդյոք ընտրողուհիներին, թե վոչ։

Մեծ պատասխանատվություն է ընկնում պատվիրակուհիների վրա խորհուրդների ընտրությունների ժամանակ. ամեն ինչ դժվար է նախատեսել։ Բայց յեթե ուշադրությամբ և միասին այդ հարցը դրվի, շատ բանի կարելի յե հասնել։

Պատվիրակուհիները պետք է հիշեն, որ ընտրովի աշխատանքներում, առանձնապես խորհրդում, նրանք պարտավոր են լինել առաջին շարքերում։ Բանվորուհիները հետևում են պատվիրակուհիների վարքին և նրանց հետ հավասարվում։ Ամեն մի պատվիրակուհի պետք է հիշի այն մասին, որ վատ աշխատող խորհրդի անդամին կարելի յե և պետք է յետ կանչել։

ԶԳՏԵԼ ԲԱՐԶՐԱՑՆԵԼՈՒ ԿԱՆԱՆՑ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎՈՐԱԿԸ

Յեթե գործարանում հարց է դրվում կանանց աշխատանքի վորակավորման մասին, պատվիրակուհին պետք է ցույց տա, թե ինչպես պետք է սովորել, աշխատել։

Պատվիրակային ժողովները իրենց վրա պետք է վերցնեն ֆաբ.-գործարանային դպրոցների հոգսը։ Իմանալ՝ վորքան աղջկերք են սովորում այնտեղ. բոլորն են արդյոք ավարտում այդ դպրոցները և ոգտագործվում իրենց մասնագիտության համաձայն։

Պարզել՝ չկա արդյոք «Շատուրայի» նման դեպքերից, «վորտեղ վարպետները գործի ընդունելու ժամանակ տղաների փոխարեն իրենք են ներկայացրել գործի որինակը, իսկ աղջիկներն իրենք են ներկայացրել որինակը, բայց աշխատանք չե տրվել նրանց»։

Պատվիրակուհիները առանձնապես ուշադիր պետք է լինեն փորձառություն ձեռք բերող և վարչական-տեխնիկական աշխատանքների համար առաջքաշված (վարպետների, վարպետացուների, ավագների և այլն) բանվորուհիների նկատմամբ։

Յեթե գործարանը պատրաստվում է անցնել 7-ժամյա բանվորական որվան, հարկավոր է, ծանոթանալով նախապատրաստական աշխատանքների հետ, պարզաբանել բանվորուհիներին և իսկույն նախապատրաստել նրանց, վորպես զի ավելի լրիվ և անվտանգ անց կացվի պետական հանձնաժողովի վորոշումը. 5-րդ ամսից հղի և մինչև 7-րդ ամիսը կերակրող կանանց գիշերային աշխատանքը արգելելու մասին։ Պատվիրակուհիները պետք է նույնպես հիշեն այն մասին, վոր յեթե արտադրական խորհրդակցություններում բանվորուհիները թույլ

մանակցություն են ցույց տալիս, աշխատեն իրենց փորձառությամբ ցույց տալ բանվորուհուն նրա գործնական ոգուտը։ Իրա՝ պատվիրակային ժողովի աշխատանքը պետք է հարմարեցնել 3 հերթի։

ԱՆԽՆԱ ՊԱՅՔԱՐ ՏԳԻՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԱՆԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Պատվիրակուհին պետք է հիշի նաև այն մասին, որ այժմ մեծ պայքար է տարվում՝ կանանց արբեցողության, հայհոյանքի, կնոջ և յերեխային ծեծելու, կրոնական սնոտիապաշտությունների, տգիտության և անկուլտուրականության դեմ։

Այդ յերևույթների դեմ պայքարում, պատվիրակուհու խնդիրն է, ոչ միայն լինել առաջին շարքերում, այլ և վարքով որինակ լինել բանվորուհիներին։ Պատվիրա-

կուհին սովորում է, չի ծեծում յերեխաներին, սուր խոսքեր գործ չէ ածում, ազատ է կրոնապաշտությունից։ Իր ընտանյական կենցաղում պատվիրակուհին նույնպես որինակելի պետք է լինի. նրա սենյակը մաքուր է, յերեխաները սովորում են և կազմակերպված են պիոներ-կոլլեկտիվում, կոմյերիտմիության մեջ։

Պատվիրակային ժողովները այս տարի ամբողջ վճռականությամբ պետք է կռիվ հայտարարեն կնոջ ծեծելու դեմ։

Ոչ մի պատվիրակուհի իրավունք չունի լռել կնոջ ծեծելու դեպքի մասին։ Նա պարտավոր է ամեն պատահած դեպքում հայտնել պատվիրակային ժողովին և նրա միջոցով բանվորական ընդհանուր ժողովում դատապարտել տալ ծեծողին, կիրառելով նրա դեմ աշխատանքից հեռացնելու, միությունից դուրս անելու և կամ գործը դա-

տարան տալու միջոցներ։ Պատվիրակային ժողովները պետք է լսեն դատական որդանների հաշվետվությունները, թե ինչպես և վորոշվում այդ գործերը դատարաններում։ Հարկավոր է նույնպես լսել միլիցիայի որդանների՝ կնոջ ծեծելու դեմ առած միջոցների մասին։

Այդ չարիքի դեմ պայքարելու համար, պետք է ոգտագործվի պատի թերթը, ընդհանուր և պատվիրակային կանացի մամուլը։

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՂՋԻԿՆԵՐԻՆ

Պատվիրակուհիները կին յերիտասարդությունը ևս չպետք է մոռանան։ Նրանց աշխատանքը, կենցաղը, կուլտուրական մակարդակը, նրանց հառաջադիմությունը պետք է պատվիրակուհու մտահոգության առարկան դառնա։ Պատվիրակուհին պետք է միշտ

հիշի այն մասին, թե ինչպես դժվար է ազատվել անցյալի ժառանգությունից, ինչպես իրեն ծանր է առաջ գնալ իր անգրագիտության, աշխատանքի ցածր վորակի պատճառով։ Կին փոխարինողները վոչ պակաս պատրաստված պետք է լինին, քան տղամարդիկ։ Պատվիրակուհիները պետք է ոգնեն աղջիկներին, վոր նրանք սովորեն, հասարակական գործ կատարեն, աճեն։

ՔՆՆԱԴԱՏԻՐ ՀԱՄԱՐՁԱԿՈՐԵՆ

Այս տարի պատվ.-ուհիների համար լուրջ խնդիրն է հանդիսանում՝ կանանց լայն մասսաներին քաշել ինքնաքննադատության գործին։ Մինչև այժմ կանանց մասսաները դեռ հեռու յեն կանգնած ինքնաքննադատությունից, կարծես վախենում են մասնակցություն ցույց տալ։ Յեվ իսկապես, դժվար է բան-

վորուհուն խոսել արտադրական և կենցաղային անկանոնություններին մասին։ Ակտիվ բանվորուհիներին յաճախ է պատահում մեղադրանքներ լսել «ըստ էության չխոսելու» մասին։ Յեվ բանվորուհին վախենում է՝ չլինի նրան ասեն. «դու ըստ էության չես խոսում»։ Բանվորուհիները հաճախ այդպես էլ ասում են. «վախենում ենք խոսել, քննադատել. մտածում ենք, վոր, ինչպես 1922 թվին, դուրս չվռնդվենք գործարանից՝ խոսելու համար» «և ինչ խոսենք, միևնույն է, գործարկոմը չի իրագործում բանվորուհիների առաջարկությունները»։

Պատվ.-ուհու համար խնդիր է հանդիսանում՝ բացադրել բանվորուհիներին, վոր հարկավոր չէ վախենալ թերությունները քննադատելուց, վոր կուսակցությունը, խորհուրդները և պրոֆմիությունները կկարողանան պաշտպանել նրանց ամեն տեսակի հարձակումներից։

Հարկավոր է նաև բանվորուհիներին իմացնել պատվիրակուհիների միջոցով այն մասին, վոր կուսակցությունը խիստ պատասխանատվության է յենթարկում նրանց, վորոնք ինքնաքննադատության համար հալածում են բանվորներին և բանվորուհիներին։

Հարկավոր է նույնպես, վորպեսզի բանվորուհիները իմանան, վոր կուսակցությունը յետ կմղի և մինչև իսկ աշխատանքից կհեռացնի նրանց, ովքեր խանգարում են կյանքի մեջ անցկացնել բանվորների և բանվորուհիների ուղիղ առաջարկությունները։

Պատվիրակուհու խնդիրն է՝ բանվորուհի մասսաներին քաշել նկատվող թերությունները վերացնելու միջոցներ մշակող

աշխատանքներին։ Հարկավոր է վոչ միայն քննադատել թերությունները, այլ և ցույց տալ վերացնելու ուղիները։ Պետք է բանվորությունն ցույց տալ, վոր ինքնաքննադատության հարվածներն ուղղի արտադրության և կենցաղի մեջ նկատվող թերությունների դեմ—պայքարի կողմը։ Չի կարելի ուշադրություն չդարձնել արտադրության մեջ անբանության, աշխատանքի կարգապահության խախտման, արբեցողության, պրոգուլների, փչացրած գործի վրա։ Այս յերևույթների դեմ պայքարում՝ պատվիրակությունները պետք է առաջին շարքերում դանվեն։

ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻՆ ԱՌԱՋ ՔԱՇԵԼԸ

Բանվորուհիներին պատասխանատու դեկավար աշխատանքների համար առաջ քաշելու ուղղությամբ կոմմունիստական կուսակցությունը մեծ աշխատանք է տանում։ Տեղերում այդ աշխատանքը դեռ թույլ է ընթանում։ Վորպեսզի այդ գործը առաջ տարվի, անհրաժեշտ է, վոր վոչ միայն կենտրոնը, այլ և նահանգները, գավառները և շրջանները իսկույն սկսեն ընտրել կանանց՝ առաջ քաշելու ղեկավարող աշխատանքների համար։

Վորպեսզի այդ գործը աշխուժացնել, գործնական հողի վրա դնել, հարկավոր է, վոր իրենք՝ բանվորուհիները, իսկ առաջին հերթին, պատվիրակուհիները պահանջեն կենտկոմի վորոշումների իրագործումը։

Պատվիրակուհին իր առաջ պետք է նաև խնդիր դնի՝ ոգնել առաջ քաշվածին, աշխատանքի ժամանակ շրջապատել նրան հավատով ու վստահությամբ։

Առաջ քաշվածի համար դժվարությունը-

ներ շատ կան։ Այստեղ հարկավոր է վոչ միայն աշխատանքը ընդգրկելու ընդունակություն, այլ և կարողանալ ղեկավարել այն. կարողանալ մարդկանց ոգտագործել կուսակցության և պետության ոգտին, առնել հանձնարարված գործը հոգուտ սոցիալիզմի ամրապնդման և աշխատավոր մասսաների։

Այն ինչ մենք բոլորս գիտենք, թե վորքան քիչ գիտությամբ է ոժտված բանվորուհին, վորքան քիչ է գրագետների և լավ պատրաստականություն ունեցողների թիվը բանվորուհիների շրջանում։ Դա պարտադրում է պատվիրակուհիներին՝ պրոլետարական ամբողջ վճռականությամբ դնել ինքնակրթության հարցը։

Առաջադիմելու համար ուրիշ ավելի հաստատ միջոցներ մենք չունենք։

Պետք է լարել մեր ամբողջ ուժերը

մաքառելու անգրագիտության և անկուլտուրականության դեմ։ Մեր նշանաբանն է. բանվորուհիներ, սովորեք, վորտեղ կարելի է և ուր կարելի է։

Պատվիրակուհու խնդիրն է, ավելի վճռական քայլեր անել կանանց ուղարկելու բարձրագույն դպրոցներ, առանձնապես կոմհամալսարաններ և տեխնիկական բարձրագույն դպրոցներ։

Կանանց առաջ քաշելու գործնական հարցի հետ միասին լուրջ հարց է դրվում արդեն խորհրդներում, պրոֆմիություններում, կոոպերատիվներում աշխատող կանանց ակտիվի լավ աշխատանքների մասին։

Այդ ակտիվից մասնագիտություն ունեցողներն առաջ են քաշվելու ավելի մեծ աշխատանքների համար։

Պատվիրակուհու խնդիրն է՝ ձգտել բազ-

մակոդմանիորեն լավացնելու ակտիվիստնե-
ի աշխատանքը և նրանց մասին ավելի
լայն ծանոթություն տալ բանվորական մաս-
սաներին։

ՊԱՏՎԻՐԱԿՈՒՀԻ՝ ԴԵՊԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կատարելով իր վրա դրած աշխատան-
քը, պատվիրակուհիները, շինարարության
մեջ սեփական մասնակցության ճանապար-
հով և մոտիկից ու լավ ծանոթանալով կու-
սակցության աշխատանքների հետ, կտես-
նեն, որ պրոլետարիատի և պրոլետարու-
հիների՝ պրոֆմիություններում և կոոպերա-
տիվներում մասսայորեն մասնակցելու ժա-
մանակ միայն առաջ կգա սոցիալիստական
շինարարության գործը։

Պատվիրակային ժողովների աշխատանք-
ների հետևանքով պատվիրակուհին կհաս-

կանա, որ իրեն ևս անհրաժեշտ է կուսակ-
ցության մեջ մտնել և դեպի կուսակցու-
թյունը քաշել բանվորուհիներին։

Մեզ մոտ, Խորհրդային Միության ծա-
վալով, ունենք մինչև յերեք միլիոն իրենց
աշխատանքով ապրող կանայք։ Բայց միևնույն
ժամանակ կուսակցության մեջ հաշվում է միայն 167.063 կին, որոնցից
90.824-ն են բանվորուհիներ։

Յեթե վերցնենք մեր խոշոր գործարաններն, առանձնապես մանածային, քիմիական և կարի ճյուղերը, որտեղ կանանց աշխատանքը գերակշռում է, այստեղ ևս կանանց կուսակցական մասը շատ քիչ է։

Կարող են արդյոք նրանք պատմել կուսակցության բանվորուհիների բոլոր ցանկությունների և կարիքների մասին և մյուս կողմից բանվորուհի մասսաներին իրազեկ դարձնել, բանվոր դասակարգին վերաբերվող

կուսակցության բոլոր կարևոր վորոշումների մասին։

Իհարկե, վոչ։

Ահա այդ պատճառով էլ գործարաններում լինում են հաճախ թյուրիմացություններ այն պատճառով, վոր չգիտեն, թե ինչ է կուսակցությունը։

Բանվորուհիների թիվը կուսակցության մեջ ավելացնելը կարևոր է և այն պատճառով, վորպեսզի կուսակցությունը կին մասսաների կարիքների մասին շատ բան իմանա։

Այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ կանանց առաջ քաշելը, կենցաղի բարելավումը, նրանց արտադրության հետ կապելը, կուլտուրական մակարդակը բարձրացնելը և այլն, հեշտ կլինի վորոշել, յեթե կին կոմունիստների թիվը կուսակցության մեջ

շատ լինի և կին-կոմունիստները լուրջ ուշադրություն դարձնեն այդ յերևույթին։

Պետք չէ դժվարություններից վախենալ, այլ համարձակորեն մտնել կուսակցության մեջ և նրա հետ միասին պայքարել դժվարությունների դեմ։

Պատվիրակուհիները գործով գիտեն, թե ինչպես հաճախ դժվար է անհատ բանվորուհուն հասնել գործարանի վորևե աշխատանքի բարելավման։ Իսկ պատվիրակային ժողովի և կուսակցության հետ միասին, բոլորը հեշտ է դառնում և շատ բան կարելի յե անել։ Առանց կուսակցության՝ ցրված փոշի յենք, կուսակցության մեջ և կուսակցության հետ—սոցիալիզմ կառուցող ուժ ենք։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

		էր.
1.	Պատվիրակային ժողովները՝ հասարակական աշխատանքների գործնական դպրոց է։	3
2.	Պետք է հիշել գործնական աշխատանքների մասին։	5
3.	Հետևիր ընդունված վորոշումների իրագործմանը	7
4.	Մեծ հոգատարություն աշխատավորուհու կենցաղին	8
5.	Ոգնիր անցկացնել խորհուրդների վերընտրությունները	11
6.	Ձգտել բարձրացնելու կանանց աշխատանքի վորակը	22
7.	Անխնա պայքար տգիտության և անկուլտուրականության դեմ	24
8.	Ուշադրություն աղջիկներին	26
9.	Բննադատիր համարձակորեն	27
10.	Բանվորուհիներին առաջ քաշելը	30
11.	Պատվիրակուհի, դեպի կուսակցություն։	34

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0057430

22278

8-1058

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.

Գրառեպվար № 2011. Տիրաժ 1000.

Թիֆլիս, Ժ.Տ.Գ.Խ. Պոլիգրաֆարհեստի 6-դ տպ., Կեցխովելի փ. № 3.